ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Սոցիալիստական հասարակության ողջ համակարգի ներկայիս խորը ճգնաժամը և դրանից դուրս գալու մտահոգությունը կարևորում է մինչև այժմ մեր ապրած հասարակարգի բոլոր կողմերի, այդ թվում՝ սոցիալական կառուցվածքի, տեսական ու գործնական մի քանի ասպեկտներին անդրադառնալու անհրաժեշտությունը։

Ամենքին է հայտնի, թե Միության մինչև այժմ գործող սահմանադրությունը և ավելի քան յոթանասուն տարի երկիրը կառավարող միակ կուսակցության՝ ԽՄԿԿ-ի ծրագրային փաստաթղթերը որքան են ծանրաբեռնված եղել դասակարգերի և սոցիալիստական սեփականության ձևերի մերձեցման, հապարակության անդասակարգ կառուցվածքի հաստատման ու ներդաշնակ զարգացման մասին իր դարաշրջանում Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Լենինի կողմից արտահայտված սխեմատիկ դատողություններով և ուտոպիական եզրահանգումներով։ Հնգամյակից հնգամյակ այլ բարձրագոչ կարգախոսների հետ միասին խոսում էին այդ մասին, երջանիկ գալիքի փոստումներով ոգեվորում աշխատավորական զանգվածներին, սակայն վերջում ստացվում էր շատ համեստ արդյունք, իսկ վերջին հնգամյակներին՝ սոցիալ-տնտեսական զարգացման պարզապես տեղապտույտ ու խորը ճգնաժամ։ Ի վերջո, մեր երկրի ավելի քան 70-ամյա և Խորհրդային պետության կողմից մի շարք երկրներին բռնի պարտադրված սոցիալիզմի շինարարության տխուր փորձը մեզ բերում է այն միանշանակ հետևության, որ սին ու փուչ են սոցիալիզմի ու կոմունիզմի մասին պատկերացումները, կեղծ ու շինծու է այդ հասարակարգի ողջ կառուցվածքը, անբնական ու անօրինաչափ են նրա տնտեսավարման ձևերը, տոտալիտար ու հակադեմոկրատական են երկրի կառավարման համակարգն ու ողջ հասարակական միջավայրը, խիստ գաղտփարանացված է մարդկանց հոգևոր աշխարհը, անտեսված է անհատի սեփական շահը, ոտնահարված են մարդու իրավունքները և այլն։

Այս ամենը միաժամանակ հուշում է, որ պետք է դուրս գալ 70-ամյա աղետալի ուղուց և ընթանալ հասարակության զարգացման բնականոն ճանապարհով, այնպես, ինչպես ընթացել է ողջ քաղաքակիրթ աշխարհը։ Այդ իմաստով այժմ մարքս-լենինյան ուսմունքը ոչ թե վերանայման և ստեղծագործական զարգացման կարիք ունի, ինչպես կարծում են ոմանք, այլ որպես հասարակական-քաղաքական պրակտիկա պետք է ուղղակի մերժվի և որպես հայացքների որոշակի համակարգ պարզապես դասվի մարդկության ստեղծած ուսմունքների պատմության շարքը ու թողնվի ապագա սերունդներին՝ ուսումնասիրելու և ճանաչելու։ Սակայն այժմ ինչպիսի նիհիլիստական գնահատական էլ որ տանք մեր ապրած հասարակարգին, միևնույն է, այն մերժել կամ թաքցնել չենք կարող, որովհետև դա մեր ոչ վաղ անցյալն է, այն եղել է, մեր պատմությունն է՝ իր մաքառումներով ու ողբերգություններով։

Սոցիալիստական կոչվող այդ համակարգն ունեցել է իր քաղաքական ու տնտեսական համակարգը, սոցիալ-դասակարգային կառուցվածքը, դաղափարաքաղաքական դավանանքը, հոգևոր-մշակութային յուրատիպ արժեքները և այլն։ Մեղմ ասած, եթե ընդունում ենք, որ սոցիալիստական հասարակարգը եղել է ոչ լիարժեք, ձևախեղված, ապա գտնում ենք, որ ձևախեղված պետք է եղած լինեն նաև նրա սոցիալական կառուցվածքի շատ գծեր։ Այս-

պես, օրինակ, ձևախեղված հասարակարգի ատրիբուտ էր «կոլտնտեսային գյուղացիություն» և «գյուղատնտեսական բանվորություն» հասկացությունների պարադոքսը։

Վերջին մի քանի տարվա գործընթացը, քաղաքական նոր իրողությունները՝ մեզ հիմք են տալիս նորովի դնել և ուսումնասիրել խորհրդային հասարակության սոցիալական կառուցվածքի առանձին հարցեր։ Դրա համար նախ և առաջ պետք է հաշվի առնել հետևյալ նկատառումները։ Եթե վերակառուցման և քաղաքական նոր մտածողության շնորհիվ հաղթահարելով գաղափարատեսական դոգմատիզմը, ընդունում ենք համամարդկային (հասարակական) արժեքների գերակայությունը դասակարգայինի նկատմամբ, ապա կնշանակի, որ մեր հասարակության մեջ բանվոր դասակարգին չպետք է վեր դասել մյուս դասակարգերից ու սոցիալական խմբերից, այլ ճանաչել որպես հասարակության սոցիալական կառուցվածքի իրավահավասար բաղադրամաս։ Իսկական հումանիստական, դեմոկրատական երկրում չի կարելի հասարակությունը բաժանել առաջավոր և երկրորդական դասակարգերի ու սոցիալական խմբերի, այնպես, ինչպես կատարվեց մեր երկրում սոցիալիզմի լենին-ստալինյան մոդելի հաղթանակի հետևանքով։ Այսինքն, մինչև վերջերս հասարակության սոցիալական կառուցվածքն ուսումնասիրելիս առաջնորդվելով կոմունիստական կուսակցության գաղափարաքաղաքական կանխադրույթներով՝ դասակարգերի ու սոցիալական խմբերի հանդեպ հանդես է բերվել ըստ էության խտրական մոտեցում։ Տասնամյակներ շարունակ բարձրագոչ մակդիրներով ու փքուն խոսքերով գովերգել են բանվոր դասակարգին՝ հետին պլան մղելով գյուղացիությանը և մտավորականությանը՝ որպես սոցիալիզմի գաղափարներին ու նպատակներին ոչ այնքան հավատարիմ, «երկրորդ տեսակի» դասակարգի ու սոցիալական խավի։ Այդպիսի խտրական մոտեցումը դրսևորվել է կուսակցության և խորհրդային պետության տեսական ու պրակտիկ քաղաքականության ոչ միայն ստալինյան ժամանակաշրջանում, այլև հետագա տասնամյակներին՝ գրեթե մինչև վերջերս։ Գյուղի և գյուղացիության սոցիալ-տնտեսական ու կուլտուրական անմխիթար վիճակը և մտավորականության մեծամասնության նյութական ներկայիս ծանր կացությունը դրա ապացույցն են։ Սակայն թող չստեղծվի այն տպավորությունը, թե բանվոր դասակարգի վիճակը շատ բարվոք է եղել։ Ըստ էության այս դասակարգն էլ է կրել գրեթե նույն զրկանքներն ու տառապանքները, ինչը որ մյուսները։ Այստեղ պարզապես կուսակցական ու պետական բյուրոկրատական համակարգն իր արատավոր գործունեությունն ու անօրինականությունները հիմնավորելու համար հանդես է եկել ժողովրդի՝ և առաջին հերթին բանվոր դասակարգի անունից։

Ներկա պայմաններում անթույլատրելի պետք է համարել որևէ դասակարգի կամ սոցիալական խմբի առավելությունը, առաջնայնությունը մեկ ուրիշի հանդեպ։ Իսկական մարդասիրական, դեմոկրատական կարելի է համարել այն հասարակությունը, որտեղ ազատորեն դրսևորվում ու հուսալիորեն պաշտպանվում են բոլոր դասակարգերի և սոցիալական խմբերի շահերը, առհասարակ մարդու իրավունքները և ազատությունը։

Նոր պայմաններում հատուկ ուսումնասիրության օբյեկտ կարող է դառնալ նաև խորհրդային պետության գոյության նախորդ տասնամյակների ընթացքում բյուրոկրատացած ու կաստայացած վարչահրամայական համակարգի հիերարխիկ կառուցվածքի բացահայտումը։ Դա այն ուռճացած վարչաբյուրոկրատական ապարատն է, որն ամենից ավելի է մեղավոր երկրի ներկայիս ճգնաժամային իրավիճակի համար։ Հենց այդ կառավարչական ապարատի տարբեր օղակներում եղած պահպանողական ուժերն են, որոնք ծածուկ կամ բացահայտ դիմադրում են երկրի հեղափոխական նորացմանը, խոչընդոտում վերակառուցմանը։

Ինչ, վերաբերում է վերակառուցման իմաստին ու բովանդակությանը, ապա էթնոսոցիալական տարբեր խմբեր այն տարբեր կերպ են ըմբռնում ու

հասկանում։ Եթե ժողովրդական լայն զանգվածները վերակառուցման տակ հասկանում են գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգի արմատական վերափոխում, ազգային փոքրամասնությունները՝ ի թիվս դրա, ազգային հարցի արդարացի լուծում, ապա կուսակցական ու պետական բարձրագույն իշխանությունները, գրեթե իրենց ողջ բյուրոկրատական ապարատի հետ միասին, վերակառուցում հռչակելով՝ այն հասկացել ու շարունակում են հասկանալ լոկ որպես մակերեսային, կոսմետիկական նորոգում։ Այդ է պատճառը, որ վերջին շրջանում ժողովրդական զանգվածների մեջ մի տեսակ ընկել է հարգը վերակառուցում և հրապարակայնություն հասկացությունների նկատմամբ և այժմ դրանք գործածությունից հանվել են, համենայնդեպս, նման արտահայտություններն այլևս լուրջ չեն ընկալվում։

Մեր հասարակության մեջ, եթե եղել է մի սոցիալական խումբ կամ խավ, որ արտոնյալ դիրք է գրավել, առանց բացառության օգտվել ամեն տեսակ առանձնաշնորհումներից, իրավունքներից, նյութական ու հոգևոր բարիքներից, ապա դրանք եղել են կուսակցական, պետական, տնտեսական, կոոպերատիվ, հասարակական կազմակերպությունների և այլ մարմինների ղեկավարներն ու կառավարիչները (այդ թվում երկրի բարձրագույն ղեկավար մասը՝ էլիտան), ապարատային աշխատողները իրենց ընտանիքի անդամների՝ նույնիսկ ազգականների հետ միասին։ Մինչդեռ ասվում էր, թե սոցիալիստական հասարակարգում չկան և չեն կարող լինել արտոնյալ դասակարգեր կամ սոցիալական խմբեր։ Իհարկե, օրենքի շրջանակներում արտոնություններ պետք է ունենան միայն երեխաները, պատերազմի և աշխատանքի հաշմանդամները, վետերանները և մարդկանց մի քանի այլ փոքր խմբեր։

Խորհրդային հասարակության սոցիալական կառուցվածքի ձևախեղիչ ուժերից մեկն էլ այսպես կոչված «ստվերային» էկոնոմիկայի հետևանքով առաջացած մարդկանց այն ծածուկ խմբերն ու շերտերն են, որոնք գործում են փաստորեն մեր հասարակության սոցիալական կառուցվածքի գրեթե բոլոր օղակներում՝ սկսած շարքային բանվորից, վերջացրած ամենաբարձր էշելոնների ղեկավար աշխատողներով։ «Ստվերային» էկոնոմիկայի ծնած բազմահազար մարդկանց այդ խմբերի տարբերակիչ հիմնական կողմն անօրինական ճանապարհով ստացած ռեսուրսներն ու եկամուտներն են։ «Ստվերային» էկոնոմիկան սոցիալիզմի անկատար տնտեսական համակարգի ծնունդ է և այդ երևույթի համար պետք է դատապարտել ոչ այնքան այդպիսի մեքենայություններ ձեռնարկողներին և դրանից եկամուտ կորզողներին, որքան առաջին հերթին սոցիալիզմի տնտեսական աննորմալ հարաբերությունները, որոնք սողանցք են թողնում այդպիսի երևույթի համար։ Դրա հետ է կապված նաև սոցիալական մեկ այլ չարիք՝ կազմակերպված հանցագործությունը (մաֆիան), որի սոցիալական բազան ամենից առաջ «ստվերային» էկոնոմիկան է։ Հարկ է ընդգծել, որ ներկայումս երկրի սոցիալ-տնտեսական խորը ճգնաժամի և քաղաքական անկայուն վիճակի հետևանքով մեծ մասշտաբներ են ընդունել հանցագործությունները և առանձնապես դրանց ամենավտանգավոր ձևը՝ մաֆիան։ Վերջին տարիներին քիչ չեն միտումնավոր կոծկվել մարդկային, նյութական ու հոգևոր հսկայական վնասներ պատճառած կազմակերպված հանցագործությունները, որոնց թելերը հասել են մինչև երկրի բարձրագույն ղեկավար մարմինները։

Եվ, վերջապես, այդ ամենին պետք է գումարել 1988 թ. դեկտեմբերի 7-ի Հայաստանի հյուսիսային շրջաններում տեղի ունեցած աղետաբեր երկրաշարժի հետևանքով հանրապետության սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի նկատելի բարդացման հանգամանքը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի հետ կապված, Ադրբեջանից հարյուր հազարավոր հայերի ներգաղթը Հայաստան։ Անդրկովկասի և Միության մասշտաբով վերցրած, ազգային, սոցիալ-քաղաքական հողի վրա, հիմնականում բռնի միջոցներով, ժողովրդագրական լուրջ տեղաշարժեր ու փոփոխություններ են տեղի ունենում։

Սոցիալական կառուցվածքը հասարակության դասակարգերի, սոցիալական խմբերի ու խավերի փոխադարձ կապերի միագումար ամբողջություն է։ Համաձայն գիտական սոցիոլոգիայի ու ժողովրդագրության, հասարակության սոցիալական կառուցվածքը պետք է ներկայացնել ոչ թե որպես ինչ-որ քարացած և պարզունակ սխեմա, այլ կենդանի ու մշտապես զարգացող օրգանիզմ, որի կառուցվածքում եղած դասակարգերը, սոցիալական խմբերն ու խավերն ունեն իրենց հակասությունների դիալեկտիկան, բազմապիսի շահերի դինամիկան։ Չէ որ, ինչպես նշել է Կ. Մարքսը՝ հենց հակասությունն է «ամեն մի դիալեկտիկայի աղբյուրը»[1]։ Հակասությունն է ամեն մի հասարակության շարժիչ ուժը։ Ինչ վերաբերում է մեր ապրած սոցիալիստական հասարակարգին, ապա կարելի է վստահ ասել, որ այնտեղ ըստ էության օրինաչափորեն չի գործել դիալեկտիկայի համընդհանուր և ոչ մի օրենք։ Դրա փոխարեն, հասարակական կյանքի առանց բացառության բոլոր ոլորտներում՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, հոգևոր և այլն, վոլյունտարիստորեն օրենքներ սահմանողի ու կարգավորողի դերում հանդես է եկել ամենաազդեցիկ կոմունիստական կուսակցությունը, որ թողել է ամեն տեսակի բացասական հետևանքներ։ Կոմունիստական կուսակցության գաղափարախոսությունը և դրա վրա հենված գործնական քաղաքականությունն իր ավերիչ ազդեցությունն է ունեցել նաև հասարակության սոցիալական կառուցվածքի շատ կողմերի վրա։ Իսկ ժամանակի գիտատեսական միտքը, կամա թե ակամա, հարկադրված էր պաշտպանել և տեսականորեն «հիմնավորել» մարքսիզմ-լենինիզմի կաղապարված ուտոպիական դոգմաները։ Լճացման հայտնի տարիներին կուսակցության գաղափարաքաղաքական պատվերները կատարող ուսումնասիրողներից ոմանք հասան այն աստիճանի, որ նույնիսկ փորձ արեցին մեր ապրած հասարակարգը արդեն ներկայացնել որպես համասեռ[2]։ Իսկ հետազոտողների մի խումբ էլ կարծում էր, թե ժամանակակից փուլում սոցիալիստական սեփականությունը կորցրել է իր դասակարգաստեղծ ուժը[3]։ Այդպիսի թյուր հետևությունների պատճառն այն է, որ նախկինում հասարակության սոցիալական կառուցվածքի հարցերը վերլուծելիս հիմնական շեշտը դրվել է դասակարգերի և սոցիալական խմբերի մերձեցնող (ինտեգրացնող) գործոնների վրա՝ երկրորդական պլան մղելով դասակարգերի և սոցիալական խմբերի միջև եղած տարբերիչ գծերը, նրանց շահերի առանձնահատկությունները և հակասությունները, առանց որոնց չի կարելի պատկերացնել առհասարակ հասարակության զարգացումը։ Կյանքը ցույց տվեց, որ մեր պատմատնտեսագիտական և սոցիոլոգիական գրականության մեջ ժամանակին թույլ տրված տեսական մեղանչումները և գերլավատեսական հապճեպ դատողությունները ոչ թե նպաստեցին, այլ, ընդհակառակը, ավելի խոչընդոտեցին մեր սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական զարգացումը։

Խորհրդային հասարակության սոցիալական կառուցվածքում իր ուրույն տեղն է գրավում բանվոր դասակարգը։ Գիտակցաբար խուսափելով բանվոր դասակարգի տեղի և դերի քաղաքական գնահատումներից, այնուամենայնիվ, պետք է արձանագրել այն փաստը, որ խորհրդային պետության ավելի քան 70 տարիների ընթացքում, չհաշված իհարկե առանձին ժամանակները, նրա թիվը շարունակաբար աճել է, կրել է նաև որակական փոփոխություններ։ Արդեն մի քանի տասնամյակ է, ինչ բանվորները կազմում են մեր հասարակության ամենամեծաթիվ դասակարգը։ Եթե 1913 թ. ցարական Ռուսաստա-

---

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, գիրք 1, Երևան, 1954, էջ 625.

2 А. И. Сухарев, Социальная система зрелого социалистического общества. М., 1980, с. 9; Г. В. Мокроносов, Методологические проблемы исследования вещественных отношений. Свердловск, 1972, с. 327.

3 Социальная структура сельского населения (сборник научных трудов). М., 1981, с. 11—13.

նի բանվորները (ներառյալ նաև նրանց ընտանիքի անդամները) կազմում էին երկրի բոլոր աշխատավորների ու ծառայողների ընդհանուր թվի 14,6 %-ը, ապա 40-ական թվականների սկզբին՝ 38 %-ը, 1960-ականի սկզբին՝ 55 %-ը, իսկ 1980-ականի կեսերին՝ գրեթե 62 %-ը։ Սոցիալ-քաղաքական նվաճում պետք է համարել այն, որ երկրի գրեթե բոլոր հանրապետություններում (բացառությամբ Թուրքմենական ԽՍՀ-ի) բանվոր դասակարգը կազմում է զբաղված բնակչության մեծամասնությունը։ Այսպես՝ 1987 թ. Հայկական ԽՍՀ-ում բանվորների թիվը կազմել է 960 հազար մարդ կամ հանրապետության զբաղված բնակչության ավելի քան 66,2 %-ը[4]։ Սա Միության մեջ ամենաբարձր ցուցանիշներից մեկն է։ Այժմ այս ցուցանիշը մեզ ոչ այնքան հպարտանալու, որքան խորհելու ու մտահոգվելու տեղիք է տալիս։ Օրինակ, հարցեր են ծագում. այդ ինչպե՞ս եղավ, որ Երևանում կենտրոնացվեց հանրապետության բնակչության մեկ երրորդից ավելին, առաջացավ քաղաքային և գյուղական բնակչության տեղաբաշխման սնհամամասնություն, ամայացան շատ գյուղեր, սրվեց պարենային պրոբլեմը, համապատասխան հումքից ու ռեսուրսներից սակավ կամ բոլորովին զուրկ հանրապետությունում միակողմանիորեն զարկ տրվեց այսպես կոչված մեծ քիմիային ու բարդացավ էկոլոգիական իրադրությունը և այլն։ Սրանք նախորդ տասնամյակներին թույլ տրված անհեռատես քաղաքականության հետևանք են։ Իհարկե, այս ամենն արհեստականորեն նպաստել է արդյունաբերական բանվոր դասակարգի քանակական աճին։

Սակայն պետք է նկատել, որ գիտատեխնիկական առաջընթացի, էկոնոմիկայի ինտենսիվացման կուրսի պայմաններում բանվոր դասակարգի քանակական և տեսակարար կշռի աճը տեղի կունենա ավելի դանդաղ տեմպերով։ Եվ այդ միտումը ամենից առաջ պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ տնտեսական, գիտատեխնիկական և ժողովրդագրական գործոններով։ Այս հարցում չի կարելի համաձայնել այն հեղինակների հետ, ովքեր գտնում են, թե արդի փուլում էկոնոմիկայի ինտենսիվացումը և գիտատեխնիկական առաջընթացը ամենուրեք խթանում են բանվոր դասակարգի աճը։ Վերջինս ոչ թե էկոնոմիկայի ինտենսիվ, այլ, ընդհակառակը, գերազանցապես էքստենսիվ զարգացման հետևանք է։ Եվ մի՞թե կարելի է ժխտել այն փաստը, որ վերջին տարիներին ինչպես Միության մեջ, այնպես էլ մեր հանրապետությունում բանվոր դասակարգի աճի տեմպերը խիստ դանդաղել են։ Այսպես, եթե բանվոր դասակարգի ամենամյա աճի տեմպերն ութերորդ հնգամյակում Միության մեջ կազմել է 2,96 %, իններորդում՝ 2,28, տասներորդում՝ 2,1, ապա տասնմեկերորդ հնգամյակում՝ 0,74 %[5]։ Այդ նույն միտումը շարունակվելու է նաև հետագայում։ Մեր հանրապետությունում այդ գործընթացն արտահայտվել է հետևյալ ցուցանիշներով։ Եթե 1965 թ. բանվոր դասակարգի միջին տարեկան թվական աճը կազմել է 9,9 %, ապա 1980 թ.՝ 4,1 %, իսկ 1980-ական թվականների կեսերին այն չի գերազանցել 3,7—3,9 տոկոսից[6]։ Սակայն բանվոր դասակարգի աճի տեմպերի դանդաղումը ոչ մի հիմք չի տալիս ենթադրելու, թե մոտ ապագայում տեղի կունենա նրա թվի կրճատում, ապագասակարգայնացում։ Ակներև է, որ կրճատվելու է գերազանցապես ֆիզիկական աշխատանքով զբաղված բանվորների թիվը։ Դրա փոխարեն աշխատանքային ռեսուրսների վերաբաշխման ժամանակ կմեծանա հատուկ պատրաստականություն ունեցող մտավոր աշխատանքով զբաղված բանվորների տեսակարար կշիռը։

Այսպիսով, բանվոր դասակարգի հետագա զարգացման հիմնական ցու-

---

4 Народное хозяйство Арм.ССР в 1987 г., Ереван, 1988, с. 183.

5 Формирование социальной однородности социалистического общества, М., 1981, с. 25: Народное хозяйство СССР в 1985 г., М., 1986, с. 390.

6 ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, № 6, էջ 7։

գանիցը կլինի ոչ թե քանակական աճը, այլ որակական տեղաշարժերը՝ սոցիալ-մասնագիտական որակավորման աճը, կուլտուր-տեխնիկական և կրթական մակարդակի բարձրացումը, մտավոր աշխատանքի կշռի մեծացումը, աշխատանքի բնույթի ու պայմանների բարելավումը և այլն։

Խորհրդային հասարակության սոցիալական կառուցվածքում եղած հասարակական մյուս մեծ խմբերից են կոլտնտեսային գյուղացիությունը և ժողովրդական մտավորականությունը։ Օրինաչափ է, որ ամենաբարձրը մտավորականության, մասնավորապես, տեխնիկական մտավորականության աճի տեմպերն են։ Այժմ մտավորականությունն իր տեսակարար կշռով երկրի բնակչության մեջ բանվոր դասակարգից հետո գրավում է երկրորդ տեղը (26 %)։ Եթե 1939 թ. ԽՍՀՄ-ում հաշվվում էր մոտ 13 միլիոն մտավորական, ապա 1985 թ.՝ ավելի քան 42 միլիոն մարդ[7]։ Ազգային կազմի տեսակետից մտավորականության տեսակարար կշիռը տատանվում է։ Եթե մտավորականության բաժինը էստոնացիների, ռուսների, հայերի, լատիշների և վրացիների մեջ հասնում է բնակչության 1/4-ին, ապա մոլդավացիների և Միջին Ասիայի բնակչության շրջանում չի գերազանցում 1/7-ից[8]։ Երկրի ամենախոշոր սոցիալական այս խավը կոչված է լուծելու ոչ միայն գիտատեխնիկական հեղափոխության հետ կապված խնդիրները, այլև բազմազան տնտեսական-կազմակերպական, կուլտուր-դաստիարակչական ու սոցիալ-քաղաքական խնդիրներ և գնալով նրա սոցիալական ֆունկցիան ընդլայնվում է ու որակապես փոփոխվում։ Ամենից առաջ նա է արձագանքում հասարակության մեջ տեղի ունեցող գործընթացներին։ Մտավորականությունը հասարակության կառուցվածքում առանձնանում է գերազանցապես իր աշխատանքի մտավոր բնույթով։ Ըստ զբաղմունքի, մտավորականության սոցիալական խավի մեջ է մտնում ծառայողների մեծամասնությունը։ Իր հերթին, ծառայողների սոցիալական խումբը բաղկացած է տարբեր շերտերից ու միջնախավերից։ Պետք է ասել, որ նախորդ փուլում ինչպես Միության մեջ, այնպես էլ մեր հանրապետությունում ծառայողների տեսակարար կշիռն աճել է։ Այսպես՝ 1970—1985 թթ. Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների ընդհանուր թվում ծառայողների տեսակարար կշիռը ավելացել է 2,8 %-ով, 1970 թ.՝ մոտ 26 %-ով (244,6 հազար մարդ), 1987 թ.՝ ավելի քան 28,8 %-ով (417,7 հազար մարդ)[9]։

Արդ, վերակառուցման կուրսով, տնտեսական արմատական ռեֆորմով էապես կրճատվում են կառավարման ավելորդ, միջնորդավորված օղակները, էժանացվում է կառավարչական ապարատը, ուր մինչև վերջերս երկրի մասշտաբով հաշվվում էր մոտ 18 միլիոն մարդ։ Կենտրոնական կառավարչական ապարատի ուռճացման մասին է վկայում այն փաստը, որ եթե 1922 թ. մեր երկրում կար ընդամենը 11 ժողկոմատ, 1940 թ.՝ 40, 1974 թ.՝ 60, ապա 1987 թ.՝ ավելի քան 100 մինիստրություն։ Մինիստրությունների, գերատեսչությունների, հիմնարկ-ձեռնարկությունների կառավարման ուռճացած ապարատի կրճատումը պետք է տեղի ունենա ելնելով նրանից, որ կառավարման շատ ֆունկցիաներ, ինքնակառավարման և սոցիալիստական դեմոկրատիայի խորացման պայմաններում պետք է անմիջականորեն տրվեն աշխատավորական կոլեկտիվներին։

Ներկայումս ժողովրդական տնտեսության մեջ զբաղված յուրաքանչյուր չորրորդ մարդը մասնագետ է, կամ երեք աշխատողին ընկնում է բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող մեկ մասնագետ։ Ընդսմին, մեր հանրապետությունում ժողովրդական տնտեսության մեջ զբաղված դիպլոմավոր մասնագետների կեսից ավելին (55,6 %-ը) ունի բարձրա-

---

[7] СССР в цифрах в 1985 году, М., 1986, с. 13.

[8] Социологические исследования, М., 1985, № 3, с. 29.

[9] Народное хозяйство Арм.ССР в 1987 г., Ереван, 1988, с. 183.

դույն կրթություն[10]։ Սոցիալական քաղաքականության տեսակետից անհրաժեշտ է ճիշտ համամասնություն ստեղծել ստորին, միջին, բարձր և բարձրագույն որակավորում ունեցող աշխատողների միջև, որպեսզի չստացվի այնպես, ինչպես հաճախ է պատահում, երբ մասնագետն այս կամ այն պատճառով իր մասնագիտությամբ չի աշխատում, կամ էլ այդ անհամամասնության հետևանքով դիպլոմավոր մասնագետը երբեմն կատարում է որակավորում չպահանջող բանվորական աշխատանք։ Այստեղ կարևոր է նկատել, որ բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց մի մասը բանվորների շարքն է անցնում ավելի բարձր աշխատավարձ ստանալու նկատառումով։ Հայաստանի կենտրոնական վարչության (ներկայումս վիճակագրության) տվյալներով 1986 թ. ժողովրդական տնտեսության ճյուղերում, դիպլոմավոր մասնագետների ոչ ռացիոնալ օգտագործման հետևանքով նրանցից 28 հազարը զբաղեցրել են պատրաստության այդպիսի մակարդակ չպահանջող պաշտոններ[11]։ Կարելի է ասել, որ առանց էական տարբերության այդպիսին է իրավիճակը նաև Մոսկվայի մյուս հանրապետություններում։ Սակայն պետք է նկատել նաև սոցիալապես որական այն երևույթը, որ նման դիպլոմավոր մասնագետները դառնում են, այսպես կոչված, սահմանային սոցիալական խումբ, ինչպես օրինակ բանվոր դասակարգի կազմում եղած դիպլոմավոր բանվոր-մտավորականներն են, որոնք բանվոր դասակարգի և մտավորականության, ֆիզիկական ու մտավոր աշխատանքի մերձեցման օղակ են։ Գնալով բանվոր-մտավորականների տեսակարար կշիռն աճում է։ Այսպես, եթե 1959 թ. Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ որաղված 265266 բանվորներից (180127 տղամարդ և 85139 կին) բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն (լրիվ ու թերի) ունեին միայն 6641 մարդ (2,4 %-ը), 1970 թ.՝ 551735 բանվորներից՝ (324583 տղամարդ և 227152 կին) 25640 մարդ (4,6 %-ը), ապա 1979 թ. մարդահամարի տվյալներով՝ 883673 բանվորներից (494224 տղամարդ և 389449 կին) բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն (լրիվ ու թերի) ունեին 83783-ը (9,5 %-ը)[12]։ Դա նշանակում է, որ 20 տարվա ընթացքում բանվոր-մտավորականների տեսակարար կշիռն աճել է շուրջ 4 անգամ։ Սահմանային այդ խումբը շատ արագ է աճում հատկապես բանվոր երիտասարդության շրջանում։ Գյուղում այդպիսի սահմանային սոցիալական խումբ են մեխանիզատորները, որոնց աշխատանքը նույնպես պարունակում է մտավոր աշխատանքի տարրեր։ Խորհրդային սոցիոլոգ Մ. Ռուտկևիչը հիմնավոր ենթադրություն է անում այն մասին, որ առաջիկայում սպասվում են մտավոր աշխատողների թվի և տեսակարար կշռի աճի համեմատաբար ավելի դանդաղ տեմպեր[13]։ Դրա հիմնական պատճառն այն է, որ գերազանցապես էքստենսիվ գործոնների ազդեցությամբ երկիրը մի շարք մասնագիտություններ գծով, կարելի է ասել, գրեթե հագեցել է։ Օրինակ՝ մեր հանրապետությունում մի շարք մանկավարժական, համալսարանական, ինչպես նաև ինժեներական մասնագիտությունների գծով պլանավորման վրիպումների և աշխատողների ոչ ռացիոնալ տեղաբաշխման հետևանքով առաջացել է շրջանավարտների ավելցուկ։ Բավական է ասել, որ ժողովրդական կրթության մարմիններում՝ հատկապես Երևան քաղաքում, 1987 թ. հերթագրված էր մի քանի հազար մարդ։

Բացի այն, որ մինչև այժմ շատ մասնագիտությունների գծով պատրաստվող մասնագետների պատշաճ որակ չի ապահովվել, ստացվել է նաև

10 Նույն տեղում, էջ 185։

11 Խորհրդային Հայաստան, 6. II. 1987։

12 Итоги Всесоюзной переписи населения 1959 года (Армянской ССР), М., 1963, с. 34; Итоги Всесоюзной переписи населения 1970 года, т. V. М., 1973, с. 32, 82; Итоги Всесоюзной переписи населения 1979 года по Армянской ССР, т. II, Ереван, 1981, с. 15, 43 տվյալները մեր հաշվարկների արդյունքն են։

13 М. Н. Руткевич, Совершенствование социально-классовой структуры советского общества на этапе развитого социализма, М., 1984, с. 17.

այնպես, որ այդ շրջանավարտների մի որոշ մասը պարզապես խուսափել է իր մասնագիտությամբ աշխատելուց։ Օրինակ, այդպիսի իրավիճակի հետևանք կարելի է համարել այն, ինչ ստեղծվել է մեր հանրապետության գյուղատնտեսության մեջ։ Բավական է նշել, որ 1978 թ. դիպլոմավոր մասնագետների թիվը հանրապետության գյուղատնտեսության մեջ ավելացավ ընդամենը 78-ով, այն դեպքում, երբ միայն 1977—78 թթ. ուստարում հանրապետության գյուղատնտեսական բուհերն ու տեխնիկումները տվել էին բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ ավելի քան 2 հազար շրջանավարտ[14]։

Ավելի մեծ անհամամասնություններ կարելի է տեսնել գյուղական բնակչության սոցիալական կառուցվածքում։ Իհարկե օրինաչափ է, որ զբաղվել կրճատվել է գյուղատնտեսական աշխատողների տեսակարար կշիռն ամբողջ զբաղված բնակչության մեջ։ 1970—1985 թթ. ընթացքում Հայաստանի գյուղատնտեսության մեջ զբաղված բնակչության տեսակարար կշիռը պակասել է 6 %-ով, 1970 թ.՝ 25 %-ով, 1987 թ.՝ 19 %-ով[15]։ Այդ նույն պրոցեսն է տեղի ունեցել նաև ամբողջ Միության մեջ։ Սակայն գյուղատնտեսական աշխատողների տեսակարար կշռի կրճատման առանձնահատկությունները, մասշտաբներն ու հետևանքները խորհրդային Միությունում և զարգացած կապիտալիստական կոչվող երկրներում միանգամայն տարբեր են։ Եթե կապիտալիստական երկրներում այդ կրճատումը, որն իմիջիայլոց մի քանի անգամ, ավելի մեծ է, քան մեզ մոտ, ուղեկցվել է գյուղատնտեսական մթերքների արտադրության շարունակական մեծացումով, գյուղի ու գյուղատնտեսության բարգավաճումով, ապա մեր երկրում՝ գյուղմթերքների խրոնիկական պակասությամբ, գյուղական բնակչության անկանոն միգրացիայով, տասնյակ հազարավոր գյուղերի ամայացումով և այլ բացասական հետևանքներով։ Այժմ գոնե անկասկած է, որ դրա հիմնական պատճառը հողի պետական-համաժողովրդական սեփականությունն է և կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների՝ գյուղատնտեսության սոցիալիստական արատավոր տնտեսավարման համակարգը։ Արդյունքը եղան դատարկ վաճառասեղաններ, հոգեմաշ հերթեր, սուր դեֆիցիտ, բարձր գներ, բաշխման քարտային համակարգ, սոցիալական լարվածություն, ի վերջո՝ դժգոհություններ, ցույցեր, միտինգներ ու գործադուլներ, իսկ տեղ-տեղ՝ նաև զինված ընդհարումներ։

Մինչդեռ, տասնամյակներ շարունակ անպտուղ ուսումնասիրություններ էին կատարվում և քաղաքականություն մշակվում կոլտնտեսային գյուղացիության և գյուղական բանվոր դասակարգի հարաբերակցության հարցի վերաբերյալ, որոշելու, թե դրանցից որն է ավելի առաջավոր, ինչպես անել, որպեսզի կոլտնտեսային գյուղացիությունը ներաճի բանվոր դասակարգի մեջ և այդպիսով շուտափույթ հասնել անդասակարգ հասարակարգի կոմունիստական իդեալին։ Այդ նպատակով, հատկապես 1950—70-ական թվականներին գործողության մեջ դրվեց անշահութաբեր կոլտնտեսությունները զանգվածաբար պետական տնտեսությունների վերակառուցելու քմածին քաղաքականությունը։ Կոլտնտեսությունների պետականացումը ոչ միայն չէր կարող վիճակը բարելավել, այլ, ընդհակառակը, ավելի օտարացրեց ու խորթացրեց հողի աշխատավորին հողից ու արտադրության մյուս հիմնական միջոցներից։ Եթե 1959 թ. գյուղական բնակչության մեջ կոլտնտեսային բնակչությունը կազմել է 69,4 %, իսկ բանվորությունը՝ 19,5 %, ապա 1979 թ.՝ համապատասխանաբար 25,9 և 61,4 %[16]։ Դիտարկելով ժամանակակից գյուղատնտե-

---

14 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, գ. 58, գ. 30, թ. 50։

15 Народное хозяйство Арм.ССР в 1987 г., Ереван 1988, с. 181.

16 Итоги Всесоюзной переписи населения 1959 года (Армянской ССР), М., 1963, с. 28—29: Итоги Всесоюзной переписи населения 1979 года по Армянской ССР, т. II, Ереван, 1981, с. 45.

սական բանվորության և կոլտնտեսային գյուղացիության իրատեսական պատկերը, դժվար չէ համոզվել, որ դրանց միջև դասակարգը բնորոշող գրեթե բոլոր հատկանիշների առումով որևէ էական տարբերություն չկա։ Վարչաբյուրոկրատական ապարատի հանցավոր քաղաքականության հետևանքով էր, որ անցած տասնամյակների ընթացքում քայքայվեց գյուղատնտեսությունը, գյուղը փաստորեն ավերվեց, գյուղացին զրկվեց հողից, ինքնուրույնությունից և տնտեսական նախաձեռնությունից։

Քանի որ հասարակության դասակարգային բաժանման հիմքում ընկած են սեփականության ձևերը, ուստի կարևոր նշանակություն է ստանում սեփականատիրական հարաբերությունների հարցը։ Հայտնի է, որ սոցիալիստական հասարակարգին և նրա դասակարգային կառուցվածքին բնորոշ են սեփականության երկու հիմնական ձև՝ պետական-համաժողովրդական որպես առաջնային, և կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականությունը՝ որպես ժամանակավոր, երկրորդական։ Սոցիալիզմի մասին մարքս-լենինյան ուսմունքն անպայմանորեն ենթադրում էր վերջին ձևի տարրալուծումը առաջինի մեջ և մեկ միասնական սոցիալիստական սեփականության առաջացումը։ Մարքսիզմ-լենինիզմը սեփականատիրության հարցում մյուս ուսմունքներից արմատապես տարբերվել է հենց նրանով, որ բացառել է մասնավոր սեփականությունն ընդհանրապես, իսկ եթե ինչ-որ տեղ թույլատրելի է համարել անհատական, վարձակալական, ակցիոներական և նմանատիպ սեփականության ձևերը, ապա միմիայն կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում։ Այս տեսակետից միանգամայն կեղծ ու հիմնազուրկ են որոշակի քաղաքական պատվերներ կատարող այն հետազոտողների նորօրյա թեզերը, որոնք կրավի առջև կանգնած մարքս-լենինյան ուսմունքը մի կերպ «փրկելու» նպատակով աշխատում են նրան պատվաստել, վերագրել այնպիսի թեզեր ու դրույթներ, որը հակասում է այդ ուսմունքի բուն հիմքերին ու բովանդակությանը։ Դա առաջին հերթին վերաբերում է սոցիալիզմի պայմաններում սեփականության բազմակացութեանության հարցին։ Բանը հասել է այնտեղ, որ պետական-կուսակցական բարձրագույն ղեկավարության մակարդակով ձայներ են լսվում, թե իբր Լենինը նույնիսկ դեմ չի եղել մասնավոր սեփականությանը։ Այսինքն ներկայիս քաղաքական ղեկավարությունը երկիրը համընդհանուր փլուզումից դուրս բերելու ուղղությամբ ձեռնարկված հարկադրական միջոցառումները տակավին շարունակում է հիմնավորել Լենինով։ Ընդհանրացնելով վերն ասվածները, կարելի է անել հետևյալ եզրակացությունը։ Սոցիալիզմը փրկել հնարավոր չէ։ Մարքս-լենինյան ուսմունքը կյանքի քննության չդիմացավ։ Նրա թեզերով ու դրույթներով այլևս անհնար է առաջնորդվել։ Սոցիալիստական սեփականության ձևերը թե՛ քաղաքում և թե՛ գյուղում դարձել են արտադրողական ուժերի զարգացման արգելակ, իսկ սոցիալիստական կառավարման ու տնտեսավարման վարչահրամայական համակարգն իրեն լիովին սպառել է։

Այս հիման վրա արդեն անիմաստ է դառնում խոսել սոցիալիստական սեփականության կենսունակության՝ առավել ևս նրա երկու հիմնական ձևերի մերձեցման մասին։ Ասենք, որ բովանդակության իմաստով սեփականության այդ երկու ձևերի միջև էական տարբերություն չկար, որովհետև երկու դեպքում էլ աշխատավոր ժողովուրդը գործնականում օտարացված էր այդ սեփականությունից։ Այդ կապակցությամբ 1987 թ. երկրի մի շարք մարզերում անցկացված սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տվել, որ աշխատավորական կոլեկտիվների բանվորների, ծառայողների ընդամենը մեկ քառորդից մինչև մեկ հինգերորդ մասն է իրեն զգացել արտադրության տեր, իսկ դրանցից շատերն էլ ինչպես հարկն է չեն կարողացել պարզաբանել, թե կոնկրետ ինչպես է դրսևորվել այդ զգացումը[17]։ Այդ միաժամանակ

---

[17] Социологические исследования, 1988, № 2, с. 11.

նշանակում է, որ եթե ժողովուրդն օտարացված է եղել համաժողովրդական կոչվող սեփականությունից, համապատասխանաբար, նա օտարացված է եղել նաև քաղաքականությունից ու ռեալ իշխանությունից, թեև վաղուց ստեղծվել էր այն պատրանքը, թե, իբր, մեզ մոտ ժողովրդապետություն է։ Հետևաբար, այսօր պետք է գտնվեն ձևեր և ուղիներ՝ հողը, ձեռնարկությունները, արտադրության մյուս հիմնական միջոցները իր իսկական տիրոջը՝ աշխատավոր ժողովրդին վերադարձնելու համար։

Ինչ վերաբերում է սեփականության ձևերի հարցին, ապա բնական ու օրինաչափ պետք է համարել տնտեսավարման, հողատիրության, սեփականատիրության այն բոլոր ձևերը, որոնք ներկայումս գոյություն ունեն աշխարհի տնտեսապես զարգացած բոլոր երկրներում։ Միանդամայն բնական ու խրախուսելի է նաև մասնավոր սեփականության վրա հիմնված տնտեսավարման ձևը, որը, ինչպես ցույց է տվել կապիտալիստական անվանվող հասարակարգի ավելի քան 300-ամյա պատմական փորձը, ամենաարագողական ու ամենակենսունակ ձևն է։ Այդ տեսակետից ողջունելի է Հայաստանի Հանրապետության անկախության մասին հռչակագրում տնտեսության և սեփականության բազմաձևության թույլատրելիության մասին հոդվածը[18]։

Մեր հանրապետությունում հողը պետք է տրվի հողագործությամբ զբաղվող քաղաքացիներին՝ անժամկետ օգտագործման նպատակով, ոչ բարձր դիֆերենցված հատուցավճարով՝ ըստ հողի բարեբերության աստիճանի և տնտեսական պայմանների։ Հողի առքևվաճառք առայժմ օրենսդրորեն չպետք է թույլատրվի։ Նրա հետգնում ևս չպետք է թույլատրվի։ Նախահեղափոխական շրջանում ցարիզմն ու կալվածատիրությունը գյուղացիությանը ստիպում էին, որ իր օգտագործման տակ գտնվող հողը հետգնի։ Հեղափոխությունից հետո աշխատավոր գյուղացին հավատաց բոլշևիկներին, թե անհատույց հող կստանա, սակայն այդպես չեղավ՝ հողը պետականացվեց, գյուղացին ըստ էության հող չստացավ և փաստորեն բռնի ճանապարհով «քշվեց» զորանոցային սոցիալիզմի տնտեսավարման ատրիբուտներից մեկը հանդիսացող կոլտնտեսություններ ու խորհտնտեսություններ և դրանով իսկ, ի սկզբանե, կայացվեց գյուղի ու գյուղատնտեսության կրախի դատավճիռը։ Ներկայիս անցման փուլում, պարենային սուր ճգնաժամի պայմաններում, կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների գոյությունը դեռևս անհրաժեշտ է։ Սակայն հետագայում, ազատ շուկայական մրցակցության պայմաններում, դրանք անխուսափելիորեն կդադարեն գոյություն ունենալուց, մինչև որ լիովին կարմատավորվեն հիմնականում մասնավոր, մեր հանրապետության տնտեսական բազմաղան պայմանների, ռելիեֆային անհարթությունների և հողահանդակների կտրտվածության համար շատ արդյունավետ մանր գյուղացիական ֆերմերային տիպի և այլ բազմակացութաձև տնտեսություններ։

Պետական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների կողքին այժմ ազատ և իրավահավասար մրցակցության պայմաններում հանդես են դալիս վարձակալը, կոոպերատորը, գյուղացի ֆերմերը, ակցիոները և սոցիալական այլ խմբեր, մի պրոցես, որի հետևանքների մասին այժմ շատ դժվար է գիտական հիմնավոր եզրակացություններ անել։ Ներկայումս արդեն ձևավորվում է անհատական աշխատանքային գործունեությամբ զբաղվող մարդկանց սոցիալական նոր խումբ։ Բացի այդ՝ կոոպերատիվ, վարձակալական և այլ պրոգրեսիվ ձևերի հետագա զարգացման հետևանքով դրանց մեջ մտնող մարդիկ նույնպես կխմբավորվեն առանձին կատեգորիաներում, թեև առայժմ նրանք ըստ իրենց զբաղմունքի բնույթի ու բովանդակության դասվում են բանվորների, կոլտնտեսականների կամ էլ մտավորականության շարքը։ Այդ նշանակում է, որ վերակառուցման կուրսով սեփականության ձևերի և արտադրատնտեսական հարաբերությունների բազմաղանությունը, բնականաբար, առաջ կբերի հասարակության սոցիալ-

18 Խորհրդային Հայաստան, 25. VIII. 1990։

դասակարգային կառուցվածքի բարդացում։ Սոցիալական կազմի բարդացումն առավել ևս թելադրում է, որ հասարակության տարբեր խմբերի ու շերտերի շահերը չեն կարող արտահայտվել մեկ կուսակցության միջոցով, և մարդկանց սոցիալ-տնտեսական ու քաղաքական շահերի, մտածողության ու հակումների բազմազանությունն անխուսափելիորեն կհանդեցնի (և արդեն հանգեցրել է) բազմակուսակցության։

Իսկ ի՞նչ կարելի է ասել մինչև վերջերս ակնարկվող դասակարգերի և սոցիալական խմբերի մերձեցման այնպիսի մի փաստարկի մասին, ինչպիսին դրանց նյութական պայմանների և առաջին հերթին ռեալ եկամուտների մակարդակի բարձրացումն էր։ Այս առնչությամբ չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ բանվորների, կոլտնտեսականների և մտավորականների ռեալ եկամուտների (որի գոյացման գլխավոր աղբյուրն աշխատավարձն է) մակարդակի մերձեցմանը զգալի չափով նպաստել է նաև նախորդ հնգամյակներին աշխատանքի նորմավորման և վարձատրության հարցում թույլ տրված տնտեսապես անհիմն համահարթեցման ու սխալ հավասարեցման քաղաքականությունը։ Նման քաղաքականությանը դարձյալ մեծ չափով սնունդ է տվել տեսական մարքսիզմը։ Դոգմատիկ մոտեցման հետևանքով ընկնելով դասակարգերի և սոցիալական խմբերի մերձեցման ցուցանիշների հետևից, փաստորեն անտեսվեց նյութական գործոնի, աշխատավարձի դիֆերենցման խթանող դերը, տեղի ունեցավ տարբեր դասակարգերի ու սոցիալական խմբերի, ինչպես նաև միևնույն խմբի ներսում եղած շերտերի վարձատրության արհեստական համահարթեցում, որը բացասաբար անդրադարձավ աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա։ Մի խոսքով, թույլ տրվեց ըստ աշխատանքի բաշխման սկզբունքի կոպիտ խախտում։

Նախորդ հնգամյակներում ինժեներատեխնիկական աշխատողների և ծառայողների աշխատավարձը բարձրացել է ավելի դանդաղ տեմպերով, քան բանվորներինը։ Այսպես, օրինակ, 1976—1980 թթ. արդյունաբերության աշխատողների առանձին կատեգորիաների աշխատավարձի տարեկան միջին աճի տեմպերը կազմել են՝ բանվորներինը 2,45 %, ծառայողներինը՝ 1, 15 %, իսկ ինժեներատեխնիկական աշխատողներինը՝ ընդամենը 0,8 %[19]։ Ինքնին հասկանալի է, որ նման դեպքում չի կարող խոսք լինել տեխնիկական մտավորականության ստեղծագործական ակտիվության և սոցիալական դերի աճի մասին։ Ուստի պատահական չէր ինժեներական աշխատանքի հարգի նվազումը։ Եթե 1940-ական թվականներին ամենաբարձր որակավորման բանվորի տարիֆային դրույքն առաջին կարգի բանվորի դրույքից բարձր էր 3,2—3,6 անգամ, ապա 1970-ականի կեսերին մտցված նոր տարիֆային դրույքով՝ 1,6—1,7 անգամ։ Միաժամանակ, զգալիորեն կրճատվեցին նաև բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների աշխատավարձի տարբերությունները։ Այսպես, եթե 1940 թ. ինժեներատեխնիկական աշխատողների միջին աշխատավարձը բանվորների աշխատավարձից բարձր էր 2,1 անգամ, ապա 1975 թ.՝ ընդամենը 1,3 անգամ[20]։ Նման երևույթը ոչ թե դրական պրոցես է, ինչպես ներկայացվում է Լ. Կոստինի և առհասարակ 1970-ական ու 1980-ական թվականների սկզբի մի շարք աշխատություններում, այլ նոր տնտեսական մեխանիզմի համաձայն, ընդհակառակը, արտադրության աճը, մարդկանց աշխատանքային շահագրգռվածությունը կասեցնող, աշխատանքի տնտեսական լծակները թուլացնող գործոն է։ Մեզ ամենևին էլ հարկավոր չէ դասակարգերի և սոցիալական խմբերի ռեալ եկամուտների այնպիսի մերձեցում, ավելի ճիշտ՝ համահավասարեցում, որի հետևանքով խոչընդոտվի

---

[19] А. С. Пашков, В. Г. Ротань. Социальная политика и трудовое право. М., 1986, с. 63.

[20] Л. А. Костин. Рост народного благосостояния—главная забота партии. М., 1976, с. 49.

արտադրողական ուժերի զարգացումը, աղավաղվեն մարդկային արդարության սկզբունքները։

Այսպիսով, հասարակության սոցիալական կառուցվածքի զարգացումը բարդ ու հակասական օբյեկտիվ պրոցես է։ Արտադրողական ուժերի հետագա զարգացումը, գիտատեխնիկական առաջընթացը, աշխատանքի հասարակական բաժանման հետագա խորացումը, ագրոարդյունաբերական ինտեգրացումը որակական փոփոխություններ են առաջացնում հասարակության սոցիալական կառուցվածքում, օբյեկտիվորեն նպաստում դասակարգերի և սոցիալական խմբերի ընդհանուր նյութական բարեկեցության և կուլտուր-կրթական մակարդակի բարձրացմանը։ Սակայն անցած տասնամյակներին այդ ուղղությամբ մեր երկրում ձեռնարկված քայլերը մեծ մասամբ կրել են արհեստական, համահարթեցնող բնույթ։ Դրա հետ մեկտեղ, ներկա փուլում նկատվում է հասարակության սոցիալական կազմի բարդացման, սոցիալական տարբեր խմբերի ու շերտերի շահերի ու պահանջմունքների բազմազանության, դրանց միջև եղած հակասությունների ազատ դրսևորման միտում։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОЦИАЛЬНОЙ СТРУКТУРЫ ОБЩЕСТВА

А. М. АКОПЯН

Резюме

Сближение классов и образование бесклассовой структуры общества является процессом сложным и противоречивым. Развитие социальной структуры общества следует рассматривать не только с точки зрения однобокого сближения классов и социальных групп, а прежде всего с точки зрения разнообразия их интересов и потребностей, развития производительных сил и социального прогресса, повышения общего благосостояния всех членов общества.

Однако в прошлых десятилетиях в нашем обществе произошли не столько закономерные сближения классов и социальных групп, сколько по существу усилилась социальная поляризация, еще более углубилось материальное неравенство.